

Լեւոնի անդորրագիրն հազար ժր.ի փոխարէն⁽¹⁾

Մենք՝ Լեւոն, շնորհիւն Աստուծոյ, բազաւոր Հայոց, կը յայտարարենք, որ պատերազմական գործի սահմանուած նպաստներու ընդհանուր հարկահաւաք Bertaut à la Dent-է ստացանք հազար Քրանկ ոսկի, զոր պերճաւոր բազաւորը խնդրի մը համար տուաւ մեզ, ինչպէս աւելի պարզ կերպով կը տեսնուի յիշեալ պերճաւոր բազաւորին կողմէ այս մասին տուած գրութենէն, որ գրուած է ներկայ յուլիս ամսի 20-րդ օրը: Յիշեալ հազար Քրանկ ոսկիէն շատ զոն եւն է ամբողջապէս ստացած. իսկ վերոյիշեալ պերճաւոր բազաւորը, յիշեալ Քերտօն ու միւս բոլոր անձերն ազատ կը կացուցանենք պարտէ: Տուեալ ի Պարիս, կնքեալ մեր կնքով, 22-րդ օրն յուլիսի, հազար երեքհարիւր ութսունչորս քովն:

Ֆրուասսար կըսէ թէ Կարոլոսի կողմէ Լեւոնի յատկացուած տարեկան թոշակին քանակութիւնն էր 6000 Քրանկ ոսկի⁽²⁾, որ հիմակուան ընթացիկ դրամով կընէ 120,000 Քրանկ: Ասկէ զատ՝ Ֆրանսայի թագաւորը Հայոց թագաւորն ամիսներով իր Լուվրի պալատին մէջ հիւրընկալելէ ետք, յաջորդ տարին, 1385, Լեւոնի եւ անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրած է Սէն'տ-Ուէնի պալատը⁽³⁾, որուն կահաւորման եւ զանազան պէտքերուն համար բացէն վճարած է Լեւոնի՝ 5,000 (= հիմակուան 100,000) Քրանկ⁽⁴⁾:

Ֆրուասսարի ըսածը կը հաստատուի ոչ միայն Կարոլոսի կողմէ տրուած հրամանագրերով, այլ եւ Լեւոնի կողմէ զանձուած ու փոխարէնը տրուած ամսական անդորրագրերով, որոնք նախորդներու նման պահուած են Պարիսի Ազգ. Մատենադարանին մէջ: Ահա անոնցմէ նմոյշ մը⁽⁵⁾.

Ամսական անդորրագիր Լեւոնի⁽⁶⁾

Մենք՝ Լեւոն, շնորհիւն Աստուծոյ, բազաւոր Հայոց, կը յայտարարենք,

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XV.

(2) *Les Chroniques de Jean Froissard*, գիրք Գ, գլ. ԻԶ եւ ԽԶ:

(3) Սեն'տ-Ուէնի պալատի մասին տե՛ս գրքիս եր. 7:

(4) Ֆրուասսար, Անդ:

(5) Ուրիշ օրինակներ տե՛ս գրքիս մեջ գլ. ԺԶ:

(6) Բնագիրը տե՛ս նմանահանուած առանձին բերքին վրայ, քիւ 70, եւ գրքիս վերջը՝ Document XVI.